

Ա. Վ. Գալստյան, Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական-21-րդ դ. 10-ական թթ.), գիրք Ա., «Էդիթ Պրինտ», Երևան, 2020, 264 էջ:

Գեղարվեստական վավերագրությունը միշտ հաճույքով և հետաքրքրությամբ եմ կարդում: Այն քեզ կարծես տեղափոխում է այլ ժամանակներ, ծանոթացնում նշանավոր մարդկանց, ներկայացնում մեծ ու փոքր զանազան դեպքեր, ու մի պահ թվում է, թե ապրել ես այդ ժամանակներում, քայլել մեծերի կողքին, մասնակից եղել նրանց առօրյային: Ընթերցելիս այդ ամենը կատարվում է ակամա, և հաճախ չես էլ մտածում, թե ինչպես է վավերագրողը քեզ տեղափոխում իր ժամանակները, բացում իր և ուրիշների հոգեկան աշխարհը, մասնակից դարձնում տարբեր իրադարձությունների:

Բ. գ. թ., դոց. Ա. Գալստյանի «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն» գիրքը նվիրված է հենց այս խնդրին. լեզվաոճական ի՞նչ առանձնահատկություններ ունի գեղարվեստական վավերագրության լեզուն, հեղինակները ի՞նչ միջոցներով են կառուցում իրենց խոսքը, որով ներկայացնում են թե՛ իրենց, թե՛ այն մարդկանց ներաշխարհը, որոնց մասին խոսում են, ինչպե՞ս են վերստեղծում, կենդանացնում անցած դեպքերն ու իրադարձությունները: Սա այս մենագրության միայն հիմնական նպատակադրումն է, որն իրականացնելու համար գրքում նաև հարակից այլ բազմաթիվ հարցեր են արծարծվել:

Աշխատության մեջ հեղինակն առաջին հերթին ներկայացրել է, թե ինչ է ընդգրկում գեղարվեստական վավերագրությունը (հիշատակարան, հուշագրություն, ուղեգրություն, օրագրություն, էսսե): Սեղմ անդրադարձով պատկերվում են հայ գեղարվեստական վավերագրության ակունքները, վերջինիս դրսևորումները նաև բանահյուսության մեջ, բայց քանի որ հեղինակի նպատակը այդ ժանրի զարգացման ամբողջ պատմության ընթացքն ուսումնասիրելը չէ, այդ ամենն արվում է ներածական բաժնում՝ որպես հիմք ու նախաբան կատարվելիք բուն աշխատանքի:

Գրքի առաջին գլխում հանգամանորեն քննվում են ուսումնասիրվող բուն շրջանին վերաբերող նյութերը, թեև ըստ անհրաժեշտության

երբեմն կա անդրադարձ նախորդող շրջանների աղբյուրներին: Հեղինակը ներկայացնում է հարցի վերաբերյալ տեսակետները, հստակեցնում իր մոտեցումները, ներկայացնում սկզբնաղբյուրների ընտրության սկզբունքները, այնուհետև անցնում մյուս հարցերի քննությանը:

Ուսումնասիրության մեջ ուշադրության են արժանանում լեզվի պատմական զարգացման ընթացքը և նրա դրսևորումը գեղարվեստական վավերագրության մեջ, ազդեցությունը լեզվաոճական հատկանիշների վրա: Տեսական դրույթներն առատորեն ուղեկցվում են համապատասխան մեջբերում-օրինակներով, որոնք ավելի հստակ և հիմնավոր են դարձնում ասվածը, նպաստում նյութի հեշտ ընկալմանը:

Պարզ է, որ ամեն մի հեղինակ մտքերը շարադրում է իր անհատական խոսքի միջոցներով, իր ոճով, և դա նկատի է առնվում տվյալ հեղինակի երկի լեզվաոճական առանձնահատկությունները քննելիս: Սակայն գեղարվեստական վավերագրության լեզվի դեպքում անհատական ոճի ուսումնասիրությունն է՛լ ավելի է կարևորվում, քանի որ գրվածքն իր էությամբ անձնական է, հեղինակի տեսածի և ապրածի անմիջական նկարագրություն՝ կատարված իր իսկ տեսանկյունից: Եվ այստեղ առաջ է գալիս նաև վավերագրության հեղինակի հոգեբանական գծերի ուսումնասիրման կարևորությունը, քանի որ այն մեծ ազդեցություն ունի մարդու աշխարհընկալման վրա:

Այդ պատճառով էլ Ա. Գալստյանը, լեզվական քննություն կատարելով հանդերձ, աշխատության երկրորդ գլխի առաջին մասում, որը վերնագրված է «Գեղարվեստական վավերագրության հոգեբանական հիմքերը՝ որպես բնագրի լեզվի կառուցվածքը պայմանավորող գործոններ», ուսումնասիրության նյութ է դարձնում նաև վավերագրությունների հեղինակների հոգեբանական ինչ-ինչ հատկանիշներ՝ ասվածը հիմնավորելով հոգեբանությանն առնչվող տարբեր աղբյուրների, տեսական ուսումնասիրությունների ներկայացրած փաստերով: Փաստական նյութի քննություն կատարելիս հեղինակը առանձին-առանձին ներկայացրել է պատմողական և նկարագրական խոսքի ոճական դրսևորումները, քննել դիմանկարը, բնանկարը վավերագրության մեջ, երկխոսության դերը խոսքի կառուցման գործընթացում:

Գրքի երկրորդ գլուխը նվիրված է բառապաշարին: Բառի քննությունը կարևոր է ոչ միայն նրանով, որ բացահայտում է հեղինակային լեզվին բնորոշ բառաշերտերը, բառի գործածության յուրահատկությունները, լեզվի զարգացման ընթացքին առնչվող տարբեր իրողություններ, այլև նրանով, որ բառագործածության քննության միջոցով հնարավոր է դառնում բացահայտել հեղինակների վերաբերմունքը, քանի որ բառի ընտրությունը նաև վերջինի արտահայտման միջոց է: Բառաշերտերի առանձնացման միջոցով վեր են հանվում ներկայացվող ժամանակի լեզվական մի շարք առանձնահատկություններ, հասարակական կյանքի տարբեր իրողություններ, ինչպես նաև բացահայտվում են այն յուրահատկությունները, որոնք բնորոշ են հատկապես վավերագրության լեզվին: Բառային միավորները քննելիս հեղինակն անդրադարձել է նաև օտար բառերի գործածությանը: Այստեղ խմբերով ներկայացված են տարբեր լեզուներից անցած բառեր՝ բնագրային օրինակներով:

Բառակազմական քննությամբ ներկայացվում են այն կաղապարները և բաղադրիչները, որոնցով կերտված բառերն առավել շատ են հանդիպում գեղարվեստական վավերագրություններում: Այստեղ քննությունը հանգամանորեն է կատարված, սակայն, կարծում ենք, որոշ դեպքերում ներկայացված են այնպիսի բառեր, որոնք լայն գործածություն ունեն, ուստի դրանք վավերագրությունների լեզվի առանձնահատկությունները ներկայացնող միավորներ չեն: Սա, անշուշտ, չի ստվերում կատարված ահռելի աշխատանքը:

Հեղինակին լիովին հաջողվել է ստեղծել գիտական մի աշխատություն, որ առաջ քաշված տարբեր հարցադրումները ստիպում են մտածել, վերլուծել ասվածը, համաձայնել կամ չհամաձայնել հեղինակին, երբեմն էլ մտովի նոր հարցադրումներ առաջ քաշել, որն էլ հենց գիտական ցանկացած ուսումնասիրության նպատակն է:

Բանասիր. գիտ. թեկնածու, դոց. Ա. Սարգսյան

artashes.sargsyan@ysu.am